ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024 թ. **N ----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 34-35-րդ, 42-րդ և 67-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 693-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ. 48-Ն որոշումները.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության՝ Երևան քաղաքի 2023 և 2024 թվականների բյուջեներից բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման նպատակով հատկացված 358,950,000 (երեք հարյուր հիսունութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) դրամի չափով կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ Երևան համայնքի կողմից լրացուցիչ ձեռք բերված 59,825 (հիսունինը հազար ութ հարյուր քսանհինգ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը՝ 6000 (վեց հազար) դրամ անվանական արժեքով, տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 600,396,000 (վեց հարյուր միլիոն երեք հարյուր ինսունվեց հազար) դրամ, որը կազմում է 100,066 (հարյուր հազար վաթսունվեց) հատ 6000 (վեց հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Կազմված է ----- --------2024թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակից
Օրինակ --

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Երևան քաղաքի ավագանու
« » 2024թ.
N -Ա որոշմամբ

ՀՀ Երևանի քաղաքապետ՝

_____ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

19.03.2004 թ.,
գրանցման թիվ 222.120.00271
ՀՎՀՀ 01002597

21.07.2010թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
“____”_____ 2024 թ.

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(փոփոխություն)

ք. Երևան 2024թ.

Ընկերության կանոնադրության 4.2. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 600,396,000 (վեց հարյուր միլիոն երեք հարյուր ինսունվեց հազար) ՀՀ դրամ, բաժանված 100,066 (հարյուր հազար վաթսունվեց) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 6000 (վեց հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության բոլոր 100,066 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Երևան համայնքին»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության 21.07.2010թ. պետական ռեգիստրում գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան» բժշկագիտական կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալն ավելացնելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, այն է՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները հաստատում է Երևանի ավագանին:

Երևանի քաղաքի ավագանու՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ. 693-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 26-ի հ.48-Ա, Երևանի քաղաքապետի՝ 2023 թվականի հունվարի 20-ի հ.170-Ա և 2024 թվականի հունվարի 18-ի հ.161-Ա որոշումներով որոշվել է Երևան քաղաքի 2023թ. և 2024թ. բյուջեներից բժշկական սարքավորման ձեռքբերման նպատակով «Երևան» ԲԳԿ ՓԲԸ-ին հատկացվելիք գումարի չափը՝ 358,950.0 հազ.դրամ գումար, որն ամբողջապես հատկացվել է ընկերությանը՝ որպես կանոնադրական կապիտալում հիմնադրի կողմից ներդրում:

Նշված գումարի սահմաններում տեղաբաշխվել է լրացուցիչ 59825 սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը՝ 6000 (վեց հազար) դրամ անվանական արժեքով, ինչի արդյունքում կանոնադրական կապիտալն ավելանում է 358,950.0 (երեք հարյուր հիսունութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) դրամով:

Հատկացված գումարի չափով կանոնադրական կապիտալի ավելացումը բխում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 42-րդ հոդվածի պահանջներից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ